ԽՍՀՄ Գերագույն խորհրդի
ՈՐՈՇՈՒՄԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՄԱԼԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ելնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը իրադրությունը կայունացնելու անհրաժեշտությունից, հետագա բռնության, այդ թվում ամեն կարգի տնտեսական պատժամիջոցների անթույլատրելիությունից, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը **որոշում է.**

1. Ի գիտություն ընդունել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի այն հայտարարությունը, որ հանրապետության իշխանության ու կառավարման մարմինները վճռական և անհետաձգելի միջոցներ կձեռնարկեն Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում երկաթուղիների ու ավտոմոբիլային ճանապարհների շրջափակումը վերացնելու նպատակով և կապահովվի բեռների անխափան փոխադրում:

2. Հավանություն տալ Ադրբեջանական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հետևություններին և առաջարկություններին:

3. ԼՂԻՄ-ի հետ կողմերի հավասարության հիմունքներով ստեղծել հանրապետական կազմկոմիտե և վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման խորհրդի ու նրա գործադիր կոմիտեի գործունեությունը, որը կախակալվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշմամբ:

Ինքնավար մարզի պետական իշխանության ու կառավարման մարմինները վերականգնելիս հայ և ադրբեջանցի բնակչության ներկայացուցչությունը պահպանել նրանց թվակազմի համամասնությամբ:

4. Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին հանձնարարական տալ կարճ ժամկետում ընդունել այնպիսի օրենսդրական միջոցառումներ, որոնք ապահովեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացում, մարզի հայ բնակչության իսկական երաշխիքներ, օրինականության պահպանում, քաղաքացիների կյանքի ու անվտանգության պաշտպանություն, բոլոր ծագող պրոբլեմների սահմանադրական լուծում:

ԼՂԻՄ-ի իշխանության վերստեղծվող մարմինների մասնակցությամբ երկամյա ժամկետում մշակել և ընդունել ԼՂԻՄ-ի կարգավիճակի մասին նոր օրենք, որը պետական, տնտեսական ու մշակութային շինարարության բոլոր ոլորտներում Լեռնային Ղարաբաղին երաշխավորի լիիրավ զարգացում ինքնակառավարման, ինքնաֆինանսավորման, տերիտորիալ տնտեսական հաշվարկի, տնտեսական ու մշակութային կապերի ազատության հիման վրա:

5. Ինքնավար մարզի իշխանության ու կառավարման մարմինների վերստեղծման պայմաններում աննպատակահարմար համարել ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի հետագա պահպանումը:

ԼՂԻՄ-ում իրադրության կայունացման միջոցառումները վերահսկելու և դրանց իրականացմանը օգնելու համար ստեղծել միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողով, այն ենթարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

6. Մինչև հասարակական-քաղաքական իրավիճակի նորմալացումը, նպատակ ունենալով պաշտպանել և երաշխավորել բնակչության անվտանգությունը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում թողնել ԽՍՀՄ ներքգործմինիստրության ներքին զորքերի համապատասխան զորաբաժին՝ այն ենթարկելով միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողովին:

7. Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, հանրապետության Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործադիր կոմիտեին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզում գոյություն ունեցող ազգային կազմը խախտող ժողովրդագրական իրավիճակի փոփոխություն թույլ չտալու նպատակով: Գաղթականների պրոբլեմների ամբողջ համալիրի լուծման համար կազմել հատուկ հանձնաժողով:

8. Հայկական ԽՍՀ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի գերագույն խորհուրդներին հանձնարարական տալ՝ բոլոր միջոցները ձեռնարկել երկու ժողովուրդների հարաբերությունները նորմալացնելու, վստահության ու համագործակցության իրադրությունը վերականգնելու, տնտեսական ու մշակութային նորմալ կապեր հաստատելու համար:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ՝ Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

Մոսկվա, Կրեմլ: 28 նոյեմբերի 1989 թ.